

ՄՇԱԿ

Տարեկան դիմել 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի:
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրությունը բաց է առաւօտան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւնները ընդունվում է ամեն լիզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իրաքանչիւր բառին 2 կոպեկ:

ԵԿՈՂ 1888 ԹԻԻՆ

„ՄՇԱԿ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԿԻՐ

Կը հրատարակուի Թիֆլիսում, նոյն դիրքով և նոյն պրոգրամայով: Մենք կը ստանանք սեփական
ՀԵՌԱԳԻՐՆԵՐ:

«ՄՇԱԿ» տարեկան դիմել 10 ռուբլի է, վեց ամսականը 6 ռուբլի:
Գրվել «ՄՇԱԿ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բարձրակարգ և Բազմապատկան փողոցների ան-
կիւնում, Թամաշիւի տանը):

Կայսերութեան ուրիշ քաղաքներէն «ՄՇԱԿ» գրվելու համար պէտք է դիմել հետեւեալ հաս-
ցեով. ТИФЛИСЪ, Редакция газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du jour-
nal arménien «MSCHAK».

Առաջիկայ տարվայ «ՄՇԱԿ» պրոգրամը նոյնը կը լինի, այսինքն I. Առաջնորդող յօդուած-
ներ. II. Ներքին ՏԵՆՈՒԹԻՒՆ. Ընդհանուր յօդուածներ (հասարակական, դատաստանական, տնտե-
սական և այլն) Թղթակցութիւններ, լուրեր. III. Կառավարչական կարգադրութիւններ. IV. ԱՐՏԱՔԻՆ
ՏԵՆՈՒԹԻՒՆ. Ընդհանուր յօդուածներ, Թղթակցութիւններ, լուրեր. V. ԽԱՆԻ ԼՈՒՐԵՐ. VI. ՀԵՌԱ-
ԳԻՐՆԵՐ և ԲՈՐՍԱ. VII. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Ֆելիետոններ, ծանուցարանորոշութիւններ, աղագրական,
ուսումնական յօդուածներ, վէպեր և այլն. VIII. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լիզուով: Վճարը՝ բառին 2 կոպեկ: Տօն անգա-
մից աւելի տպվող յայտարարութեան համար նշանաւոր դիմում կը լինի:

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՐԻ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԳԱՌՈՒԹԻՒՆ

Ինչի մեղադրել մի դասակարգ.— ՆԵՐՔԻՆ ՏԵ-
ՆՈՒԹԻՒՆ. Նամակ երևանից. Ներքին լուրեր.—
ԱՐՏԱՔԻՆ ՏԵՆՈՒԹԻՒՆ. Տեղեկութիւններ Թիւր-
քաց Հայաստանից. Արտաքին լուրեր.— ՀԵՌԱԳԻՐ-
ՆԵՐ.— ԲՈՐՍԱ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— ԲԱՆԱ-
ՍԻՐԱԿԱՆ. Պատկերներ վասպուրականի հայոց
կեանքից.

ԻՆՉԻ ՄԵՂԱԳՐԵԼ ՄԻ ԴԱՍԱԿԱՐԳ.

Մի շարք յօդուածներ, «Հայ ազգի կա-
տաղի թշնամին» վերնագրով, որոնք տալ-
վեցան «Արձագանք» շաբաթաթերթի վեր-
ջին համարներում, իրանց վրա հասարա-
կութեան ուշադրութիւնը դարձրին: Յօդ-
ուածների մեղքն այն է, որ օտարները մեր

մասին, հայերի մասին, վատ կարծիք ունեն,
չնորհով մեր առևտրական դասակարգի:
Որտեղ օտարները միջոց ունեն ծանօթա-
նալ մեր ազգի միւս դասակարգերի հետ,
նրանք լաւ գաղափար են ստանում հայե-
րի մասին, իսկ որտեղ օտարները չգիտե-
ն միմիայն մեր վաճառականների հետ,
նրանք ամենավատ կարծիք են ստանում
հայոց ազգի մասին: Դրա պատճառն այն
է, յօդուածագիր կարծիքով, որ մեր առև-
տրական դասակարգը ոտքից մինչև գլուխը
ապականված է բարոյապէս:

Մենք չենք յիշի այստեղ մի առ մի այն
բոլոր խոշոր պակասութիւնները, որ յատ-
կացնում է «Արձագանքի» խմբագիրը մեր
առևտրական դասակարգին, միայն թող կը
տանք մեզ նկատել որ քիչ թէ շատ գիտե-
լով մեր ազգի միւս դասակարգերը, հազիւ
թէ կարելի լինէր հասնել այն եզրակա-
ցութեան, թէ այն բոլոր պակասութիւն-

ները և սարսափելի արատները, որոնք պ-
Աբգար Յովհաննիսեանի կարծիքով յատուկ
են միայն հայ վաճառականներին, յատուկ
չը լինէին և մեր ազգի միւս դասակարգե-
րին:

Յօդուածագիրն ասում է, որ ամենայա-
ապացոյց թէ մեր ապականված առևտրա-
կան դասակարգն է մեր ազգի անուն կոտ-
րող օտարների աչքում, այն է, որ Կօր-
պատի հասարակութիւնը լաւ կարծիք ու-
նի հայերի մասին, որովհետեւ տեսել է մի-
միայն հայ ուսանողների մի քանի սե-
րունիներ, իսկ Մարտիի հասարակութիւնը
ամենավատ գաղափար ունի հայերի մա-
սին, որովհետեւ բացի վաճառականներից
ուրիշ հայերին չէ տեսել: Չը գիտենք,
զուցէ Կօրպատը միշտ բաղդ է ունեցել
միմիայն ընտիր հայ ուսանողներին տեսնե-
լու, բայց յօդուածագիրը, որ ինքն եղել է
Հայացիների համալսարանում, թող ձեռքը
խցիկ վրա դնելով, խոստովանուի մեզ հետ,
որ և Հայացիների, Մոսկվայի, Հելսինքի և
Յիւրիկի հասարակութիւնների մէջ հայի
անունը մի ժամանակ բաւական կոտորված
էր, այդ քաղաքներին մէջ ուսանող հայ ե-
րիտասարդների անարժան վարմունքի
պատճառով: Յօդուածագիրը գիտէ որ կա-
յին մեր մէջ և լաւերը, բայց կային և
այնպիսիները, որոնք միայն ամօթ կարող
էին բերել հայ անունին: Եւ դրանք ուսա-
նողներ էին, դրանք հօ՛ վաճառականներ
չէին:

«Արձագանքի» խմբագրութեանը շատ
լաւ յայտնի պիտի լինի որ օտարների աչ-
քում մեր անունը կոտորվելից, իսկ մեր
մէջ իրանց դիրքով դեր խաղացողները
շատերը պատկանում են ոչ թէ վաճառակա-
նական, այլ օրինակ աղւաւական, կամ պե-
տական ծառայութեան մէջ եղած մարդ-
կանց դասակարգին:

Մի հայ ծառայում է երկար տարիներ
պետական ծառայութեան մէջ, կոդուպտում
է գանձարանը, կաշառքներ է ընդունում
և սաստիկ հարստանում է: Եթէ նա զա-
ւակներ ունի, այս իր ազնիւ ճանապարհով
ժողոված հարստութիւնը իր զաւակներին
է թողնում, որոնք և վայելում են նրա

մահից յետոյ այդ հարստութիւնը, իսկ ե-
թէ անզաւակ է մեռնում, նա ազգի բարե-
րար է դառնում և ահա մեր նոր սերուն-
դը կրթվում է այդ ազնիւ ճանապարհով
ժողոված գումարների տոկոսով: Այդ տե-
սակ մարդ հօ՛ վաճառական դասակարգին
չէր պատկանում:

Եթէ Պետերբուրգի ուսու հասարակու-
թիւնը վատ կարծիք ունի հայերի մասին,
այդ կարծիքը կազմել է ոչ թէ միայն
մեր առևտրական դասակարգի բարք ու
վարքը դիտելու պատճառով, բայց և աչքի
առաջ ունենալով և մեր այլ դասակարգե-
րը: Մեր ստորին դասակարգի մէջ յայտնվող
այն անմիթար և մեզ արատ բերող
երեւոյթը, որ ծանօթ է Ռուսաստանի ամե-
նահեռաւոր քաղաքներին և որ յայտնի է
իսկ առաջին դասակարգի մէջ, ամենա-
նորմի միջէ իր զոյուլթեամբ պարտական է
մեր առևտրական դասակարգի բարք ու
վարքին, քանի որ խաչադրութիւնը ոչինչ
կապ չունի վաճառականութեան հետ:
Կամ միջէ հայ վաշխառուի տիպը, որ և
մտել է արդէն ուսաց գրականութեան
այլ և այլ գրութեանը, թէ բոմանների
և թէ թատրոնական պիէսների մէջ,—
միջէ այդ բոլոր տիպերը վերցրած են
հայ առևտրական դասակարգից: Վերջենք
միայն «Петербургскіе коты» յայտնի առև-
սաց թատրոնական պիէսին, որի մէջ նկա-
րագրված է Պետերբուրգի ուսաց հասա-
րակութեան ապականված մասը,— և այդ
ապականված շրջանում աչքի ընկնող դեր
է խաղում մի հայ վաշխառու, որ իր օ-
րում վաճառական չէ եղել, այլ ծագում է
ազնական դասակարգից, մի ժամանակ
զինուորական է եղել, ապա իր հարստու-
թեանը հիմք է դրել խաղախի թղթախա-
ղով և ապա շարունակել է հարստանալ
վաշխառութեամբ, չորս կողմ կեղեքելով և
հարստահարելով... Ինչո՞վ է մեղաւոր մեր
առևտրական դասակարգը, որ մեր մէջ գո-
յութիւն ունի այդ տեսակ տիպ:

Վերջենք մեր խոսելիքէնցիային, մեր
բարձր ուսումնականներին,— միջէ նրանք
իրանց բարք ու վարքով, իրանց բարոյա-
կանութեամբ աւելի բարձր են, քան թէ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱՏԿԵՐՆԵՐ

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՀԱՅՈՑ ԿԵՆՔԻՑ

(Իմ յիշողութիւններէն)

Բակի մէջ լավող ոտերի ձայնը ապացոյց էր,
թէ պիտի ունենայինք նոր հիւրեր և ահա սե-
նեակի դռները բացվելով, ներս մտաւ մի բաղ-
մուրթիւն: Այդ բաղմուրթիւնը բաղկացած էր մուշ-
սի Ստեփան աղայի հանդուցեալ եղբօր որդիե-
րից ու թոռներէր: Դրանք խմբովին վերադա-
ռած էին շուկայից, ինչպէս ամեն երեկոյ:

Նախ մէկ երկու տղեկութիւն այդ անձերի
մասին:

Մեր հայի աղան անզաւակ էր: Երիտասարդ
հասակին կարգվելով, տաս տարիէն յետոյ մեռած
էր իր ամուկ կինը: Արդէն նա աշխարհասէր մէ-
կը չէր, որպէս զի երկրորդը առնէր, ուստի իր
բոլոր սէրը և հարստութիւնը նուիրել էր եղբօր-
որդիներին: Նրա մեծ եղբայրը քանի մը տարի
առաջ մեռնելով, թողած էր հինգ արու զաւակ—
մուշսի Մկրտիչ, Յովհաննէս, Կարապետ, Պողոս
և Պետրոս: Դրանք բոլորն էլ իրանց հանդուցեալ
հօր և հայի Ստեփան աղայի հետ վարում էին ի-
րանց առևտրական գործերը երկու մեծ խանութ-
ներում:

Դրանց հայր մուշսի Աւետիսը առաջին տեղն
էր բռնում քաղաքում մինչև իր մահը՝ իր մեծ

ժողովրդականութեամբ, բարեպաշտութեամբ, խել-
քով ու հարստութեամբ:

Վաթսուամեայ մուշսի Մկրտիչը տար-
բերվում էր իր հօրից տաճիկների հետ ունեցած
յարաբերութեամբ, դիւրագրգռութեամբ ու զինե-
մուրթեամբ: Նա ունէր ինն աղջիկ ու չորս որ-
դի:

Յիսուսն ու հինգամեայ Յովհաննէսն ու ա-
ղան գերադանում էր հօրը իր ուսումնասիրու-
թեամբ, ընկերականութեամբ ու համեստու-
թեամբ: Նա ունէր չորս աղջիկ ու վեց տղայ:

Փառաւանմեայ Վարապետն աղան օժ-
տուած էր մեծ հուշակ տալու իրանց արդէն հոռ-
չակեալ ընտանիքին, եթէ կաթնածամա՛ս չը լի-
նէր: Նա թողած էր հինգ որդի—արու և եգ:

Երեսուն ու հինգամեայ Պօղոսն աղան
աշխատում էր շնոր մարդ էրեւալ, բայց նա չու-
նէր քնաւ իր մեծ եղբայրների ու հօր բարութիւ-
նը ու ողորմածասիրութիւնը: Ազատ էր ու ժը-
լատ, եթէ չասենք հարստահարող: Շատ էր պար-
ծենում իրանց պերդաստանի անունով: Վե՛ր Չըթ-
չենց տան զաւակն եմ—ասում էր նա մի ա-
ռանձին շնչով, երբ պէտք լինէր իր կապկածելի
իրաւունքները պաշտպանելու: Նա նոր էր ամուս-
նացել ու առաջին զաւակն էլ մեռած էր:

Վերջապէս երեսնամեայ պարոն Պետրո-
սը կարծես թէ քնաւ Չըթչենց տան զաւակը չը
լինէր, թէ և օրը քառասուն անգամ հպարտու-
վին անտեղի: Իր կարծիքով նա պատկանում էր
շնոր սերնդին: Շատ էր սիրում կարգաւ գրեթե
ու լրագիրներ, բայց անպատճառ ձրի լինելու
պայմանով: Նա իր կեանքի մէջ մի փարայ տը-
ւած չէր գրել կամ լրագրի, թէ և մէկ շաբաթ

իսկ չէր կարող դիմանալ առանց կարգաւոր իր
բոլոր խօսակցութիւնը «ազգասիրական» էր, մին-
չև իսկ չէր զլանում նուրիլ իր «սիրած» ազգին
օրական մէկ ոտանաւոր և պէտք է խոստովանած
որ բաւական լաւ բանաստեղծ էր: Նրա ոտանա-
ւորները շատ մարդու լացը կարող էին շարժել,
իսկ ինքը հեղինակը ամբողջ մարմնով երկնք էր
վերստում նրանց կարգալիս: Պարոն Պետրոսը չա-
փազանց ժլատ էր. նրա բառարանի մէջ «բարու-
թիւն» բառը «մահացու մեղք» էր թարգմանված:
Ոչ միայն աղբատը, տառապանքը, ընկերը, այլ
եթէ իր «սիրած» ու պաշտած համայն ազգը իր
աչքի առաջ անօթութիւնէն ու զրկանքէն հողին ա-
ւանդէր—առանց բնաւ իրձահարվելու մի պա-
տառ հայ, մի փարայ իսկ չէր չլսաւի նա նրա
առաջ... Այլ սակայն—ն մարդկային կուրու-
թիւն—այլ սակայն, ասում եմ, նա ամենայն ան-
կեղծութեամբ համոզված էր թէ ինքը մեծ, խիստ
մեծ չազգասէր է: Ամեն անգամ, երբ ես լսում
էի նրա կարօտակէզ ակնը մեր «Թշուառ» ազգի
կարօտութեան համար, յիշում էի ականայ Գա-
մառ-Փաթիկայի սոյն երգիծական տողերը:

«Այն, ինչպէս կուղեն, որ հայի երկիրն
չեմարան, դպրոց, գրատուն ունենար,
Ունենար թատրոն և շատ լրագիր...»

Իսկ նա ինձ փողի անունը չի տար:
Պարոն Պետրոսը, չը նայելով իր հասակին, հօր
և հայի Ստեփանի ժառանգութեան մէջ ունէր
աւելի քան 1,000 օսմանեան լիւրայ կարողու-
թիւն: Նա դեռ ամուսնացած չէր: Նա չափա-
կանց արհամարհում էր ամենքին և շատ քիչ
մարդու էր նուիրում իր մտերմութիւնը: Իսկ նը-
րա մտերմութիւնը կայանում էր երեք բանի մէջ.
1. պարծանք իր հանդուցեալ հօր մեծ զործերի,

2. ցաւակցութիւն «Թշուառ» ազգի կացութեան
և 3. գովեստ իր բանաստեղծութեանց: Նա զոց
գիտէր (անգիր) գրեթէ իր բոլոր ոտանաւորները
և խօսակցութեան ատեն ցիտաւորներ էր բերում
նրանցից իր ի պատասխան իրան ուղղեալ հար-
ցերի:

Վերոյիշեալ բաղմութեան մէջ այդ չորս եղբայր-
ներից դատ կային նաև իրանց 12—20-ամեայ որ-
դիքը, վեց կամ եօթ հողի Գրանց վրա առանձին
բան չուներ ասելու: Վա՛նայ ընտանիքներում այդ
հասակի տղաները չունեն դեռ ևս ոչինչ նշանա-
կութիւն: Նրանք զտնվում են իրանց մեծերի
ծանր ճնշման տակ և անկարող են արտայայտել
իրանց ներքին լսար, որով դժուար է ճանաչել
նրանց ընտանիքների մէջ:

Այդ բաղմութիւնը մտաւ մեր սենեակը—չը նա-
յած դռները լայնութեան—սպիտակ ձեռքով, այսին-
քն մէկը միւսի ետեւից, տարիքի երեւելի համե-
մատ: Մուշսի Մկրտիչը տեսնելու պէս ոտքի
կանգնեցայ: Ամեն մէկի մտած ժամանակ լսվում
էր նորիկի բարբի իրիզուն—ը և իմ ու հայի ա-
ղայի «Աստուծու բարին»-ը: Նրա բոլորն էլ շար-
վեցան իրանց հասակի կարգով իմ և հայի աղայի
կողքին՝ ծալապատիկ կամ չըբած:

Սովորական յարգանքներից յետոյ բացվե-
ցաւ օրվան լուրերը վրա: Պարոն Պետրոսը պատ-
մեց, որ լրագիրները ասելով, հրէից դէմ ամբողջ
հալածութիւն շարունակվում է հարաւային Ռուսաս-
տանում:

—Սովեթան Մամուլի ժամանակ... մեղայ Աս-
տուծոյ—Սովեթան Մաշիկի ժամանակ—սկսեց
իսկոյն հայի Ստեփանը իր հանդարտ ու զուարթ
ձայնով.— Բոսնիայից սկսեց խառնուրդ լուր
իսկ, ես էլ դա ի (այնտեղ էի): Ետայ մարդ ետ-

մեր վաճառականները: Ընդհանրապես, եթե աչքը առաջ ունենանք այն ճշմարտությունը, թե ի՞նչ է առաջին անգամ, նրանք էլ առաջին կը պահանջվին, պետք է խոստովանվենք որ մեր խնամքը նրանք իր քաղաքականությունը առաջին անգամ է քան թե մեր վաճառականները: Չը մոռանանք որ խնամքը նրանք կոչումը պիտի լինի հասարակական և ընտանեկան բարոյական տիպար լինել, նրա պարտավորությունը պիտի լինի բարի օրինակ ցույց տալ ազգի միւս դասակարգերին: Բայց իրականություն մէջ ի՞նչ ենք տեսնում: Նախ՝ մեր խնամքը նրանք է որ մահաբան հարուած է տալիս ազգային գլխաւոր յատկութեանը, մայրենի լեզուն, մոռացութեան տալով և անտես անելով իր մայրենի լեզուն, և այդ կողմից կարող է իրաւամբ անուանուիլ՝ ազգի կատաղի թշնամի: Երկրորդ՝ մեր խնամքը նրանք է որ ամենամեծ ձգտում է ցոյց տալիս ձեռք բերել ներթափան միջոցներ ամեն ներքին և աննկողն ճանապարհով, չար-համարհելով նոյն իսկ ամուլած վաճառականական և վաշխառու դասակարգի օգնութիւնը այդ նպատակին հասնելու համար, խոնարհելով ստորախաւով նոյն վաշխառու դասակարգի առջև, շողորթելով նրան՝ հասարակական որ և է չաղ պաշտօն ձեռք բերելու համար, կամ վաշխառուի աղջկայ հետ պատկերով, մի խոշոր գումար, բաժինքի ձեռք, ձեռք բերելու համար....

Ի հարկէ կողմնապահութիւն, և անպայման հակառակելու ու անպատճառ լրադրական բանախօս անելու ցանկութիւն կը լինէր մեր կողմից, եթէ մենք չը խոստովանուէինք որ «Արձադանք» կարծիքը մեր առեւտրական դասակարգի պահասութիւններին մասին մասամբ ուղիղ է: Բայց գտնել այդ պահասութիւնները միմայն առեւտրական դասակարգի մէջ՝ անարդար է, քան որ մեր խնամքը նրանք առաջին էլ ապականված է, քան թե մեր վաճառականական դասակարգը: Ճշմարիտ է որ մեր առեւտրական դասակարգը խոշոր և շատ անհամարելի կողմեր ունի, բայց արդար չէ այդ պահասութիւններին պատճառով միմայն մեր վաճառականներին անուանել «ազգի կատաղի թշնամիներ», այն ինչ միւս մեր դասակարգերը շատ էլ բարձր չեն մեր վաճառականներին: Ի՞նչի չը խոստովանվենք ճշմարտութիւնը, մեր գիւղական ամբողջ, բարեւոյ ստորութեան պատճառով, նոյնպէս բաւական ապականված է, ոչ մի տեղ, որքան մեր ստորին, գիւղական դասակարգի մէջ չէ տիրում այն աստիճան անմիաբանութիւն, նախանձ, փոխադարձապէս միմեանց փոս փորելը, միմեանց խոտի և ցորենի դէպեր այրելը

միմեանց տուն քանդելը, միմեանց այգիներ ինչպէս լիւր... Վերջերք մեր ստորին դասակարգի, մեր գիւղական մարդու ասված, ազնիւ, միամիտ անուանված շրջանի մի երիտասարդին կամ աղջկան, որպէս տանու ծառայ կամ աղախին, այն շրջանի, որ մեր ազգութեան ազգաբնակչութեան ահագին մեծամասնութիւն է և կազմում քանի որ չէ կարելի չը խոստովանուիլ որ հայոց ազգի ահագին մեծամասնութիւնը երկրագործներն են, և զուգէ մասամբ կը փոխէ ձեր կարծիքը այդ շրջանի բարոյական մարքութեան մասին... Մեր խնամքը նրանք յի վրա այլ ևս չենք խոսում:

Գուցէ մեր ազգի ամենամարդու, ամենապահիւ դասակարգը մեր քաղաքների արհեստավորների դասակարգն է, և այն էլ զուգէ հնարարեան համբարական, համայնական, ընկերական գեղեցիկ կազմակերպութեան շնորհով... Բայց ուրիշ կողմից այդ դասակարգը անշարժ է, անտարբեր է դէպի որ և է մտաւոր շարժում:

Արդէն այն պատճառով մեր վաճառականների դասակարգը, իր բոլոր խոշոր արտաներով հանդերձ, չէ կարելի «ազգի կատաղի թշնամի» անուանել, որ ազգային գոյութեան գլխաւոր յատկութիւնը, մայրենի լեզուն, գլխաւորապէս մեր առեւտրական ընտանեկան շրջանում է պահպանվել մինչև այժմ, դարերի ընթացքում: Այն ինչ նոյն մայրենի լեզուն, մինչև անգամ գիւղական ազգաբնակչութեան շատ տեղերում, անհետացել է և տեղ է տուել թուրքաց, պարսից, վրաց լեզուին և այլն....

Իսկ ինչ որ վերաբերում է մեր խնամքը նրանք, այդ շրջանը, որին ի հարկէ «Արձադանք» խմբագիրը, իր հասարակաց գիրքը շնորհով ինքն պատկանելով, ամենից շատ է յաճախում: Այդ շրջան է, ինչպէս պ. Գովհաննիսեանի շատ լաւ յայտնի է, թէ մայրենի լեզուն արհամարհելու և անտեսելու և թէ դէպի ազգի մտաւոր կեանքի շարժումը ապահիջ անտարբերութեան կողմից, կարելի է իրաւամբ «ազգի կատաղի թշնամի» անուանել: Մենք իրենում ենք որ մենք էլ ճանաչում ենք մեր առեւտրական դասակարգի զուգէ պահասութիւնները, բայց անցնէ ինքնուրեք կարելի է միթէ ազգի կատաղի թշնամի անուանել այն դասակարգը, որը դարերի ընթացքում ամենից շատ է օգնում ներսպալէս, առատ կերպով մասնակցելով ամեն տեսակ բարեգործական, ուսումնականական, ազգային և հասարակական հանգանակութիւններում, ամենից շատ նուիրելով և եկեղեցուն, որին զուգ ինքնուրեք միշտ համարել էք ազգի գոյութեան միակ պահպանող:

Եւ մինչև որ առեւտրական դասակարգը

դարերի ընթացքում առատ նուիրել էր տալիս եկեղեցուն, գտնվեցան մեր մէջ մարդիկ, որոնք բոլորովին ուրիշ դասակարգերին են պատկանում, որոնք այսպէս թէ այնպէս կողոպտեցին էջմիածնում զիջված եկեղեցական գումարները:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

Նոյեմբերի 2-ին

Երևանից քիչ դուրեւան մէջ կը լինի մի քաղաք, որը իր ժողովրդի և դուռնայի հետ միասին խաղաղ է դառել մի քանի մահադիւնի և քեւալ աշխարհի երկի ձեռքում: Երևանում, ինչպէս յայտնի է, կենսական գլխաւոր պիտոյքների հացի և մսի վաճառելը դառնում է ամբողջապէս թուրքերի ձեռքում, այդ միջոցների վրա ամեն ամիս տակսա է նշանակվում: Բայց ինչ նշանակութիւն է ունենում այդ տակսան տեղիս հացավաճառների համար, որ ինքն յայտնի չէ: Հէնց որ տակսան դառն զուր չէ գալիս, յանկարծ տեսնում էք, որ քաղաքացիներն, կամ լաւ ևս է ասել, ընկալ քաղաքում, հացավաճառները իրանց խանութները փակում են, հաց չեն թխում, կամ եթէ թխում էլ են, այնքան քիչ, որ 5-6 ժամ սպասելուց յետոյ հազիւ մի մարդ կարողանում է հաց գնել և այն էլ ինչ հաց, կատարեալ խմոր, որ հազիւ թէ ուտվում է: Մշտադէպ հասկանալով տեղիս ժողովրդի դուռնութիւնը, քաղաքային վարչութեան թուրքները, այսպիսով տակսան ամիս մէջ երկու երեք անգամ փոփոխում են, ինչպէս էր անցնել հակառակը, որ հացի վրա 30 կողեկից բարձրացաւ 32 և 34 կողեկի, իսկ այս ամսում 36 կողեկով ենք ուտում:

Քաղ. վարչութիւնը իր մէջ այնքան ոյժ չէ զգում, որ կարողանայ սանձադրել այդ թուրքներին, ստիպել նրանց տակսայով շարունակ և լաւ հաց մատակարարել ժողովրդին: Քաղաքային վարչութիւնը իրաւունք չէ ունենում ամեն միջում տակսան պահանջներ, իսկ այնպիսի ժամանակներում, երբ դիցուք ցորենը թանգ է, այդ հացավաճառները չեն ուզում մի ամիս դնել տակսայով ծախել. դեռ չենք ասում այն, որ եթէ շատ անդամ ցորենը հրապարակաւ թանգանում է, այդ անոցները իրանք չոր աքիքն են, որ իրանց ցորենը հանում են հրապարակ և իրանք բարձր գնով գնում են, որ թանգանելով ցորենի գինը ցուրտան էլ բարձրացնեն Այս բոլոր հանգամանքները մէջ ահա, Երևանի ժողովուրդը այժմ այնպիսի նեղութիւններ է քաջում մի քանի թուրք

քերի ձեռքում, որ նոյն իսկ ոչ մի պարսկական քաղաքում չէք տեսնի, էլ իսկ մնաց քաղաքային ինքնավարութիւն ունեցող մեր Երևանում:

Ինչքան որ քաղաքի լուսավորութիւնը, ջուր բերելը և այլն և այլն պատիւ է բերում մեր քաղաքային վարչութեանը, այնքան էլ ամօթ է բերում ժողովրդի մի քանի մարդկանց՝ ձեռքում խաղաղ լինելը: Ինչ է նշանակում. քաղաքի 3/4 մասը 5-6, նոյն իսկ 10 ժամուրով քաղցած պէտք է մնայ և քաղաքային վարչութիւնը չէ կարողանում դէժ կիսով չափ թեթեանցել նրա այդ դուռնութիւնը: Այդ բոլոր նեղութիւնը ամբողջովին ընկած է տեղիս միջին և աղքատ հայ դասակարգի վրա, որովհետև հարուստները և դուռնայի ձայնաւորները կամ վարչութեան անդամները օգտուում են իրանց դիրքով, ստանում են ամենաւատարմայ անցնալ երկու ամսվայ այս կերպ ժողովրդին հասած նեղութիւններով և այսուհետև գտնէ կաշխատի սանձադրել մի քանի քեւալաւայիններին, կը ստիպէ նրանց լաւ և շարունակ հաց մատակարարել ժողովրդին և այն էլ նշանակված տակսայով:

Շուտով մենք ունենալու ենք այս ձեռնալաւ սեղօնի համար թատրոնասէրների մի խումբ, որ պատրաստվում է տալ 5-6 ներկայացում: Խումբը քաղաքացած է տեղիս թեմական և Գայիանեան օրիորդաց դպրոցների ուսուցիչներին և ուսուցչուհիներին: Գրա ինքիցատիւ պատկանում է թեմական դպրոցի տեսուչ պ. Գովհաննիսեանին, որը մի երկու նշանաւոր անձանց հետ գործի գլուխն է անցնել: Արդիւնքը բաժանվելու է հետեւեալ կերպով: մի երրորդ մասը թեմական դպրոցի չքաւոր աշակերտների օգտին, մի երրորդ մասը Գայիանեան օր. դպրոցի օգտին, մնացածի կէսը գիմնազիայի չքաւոր աշակերտների օգտին, իսկ միւս կէսը թատրոնական խմբին: Նպատակը գովել է և գործի գլուխն անցած մարդիկը բաւական երաշխաւորութիւն խոստանաւ գործի առաջադիմութեան համար:

Ի սրտէ ցանկանալով աշողութիւն, կը ցանկանայինք միայն որ ինչպէս շատ տեղ կրկնվում է, խումբը չը վաղի միայն ներթափանի հտեից, այլ աշխատի պիտանների լաւ ընտրութիւն ևս անել, որպէս զի բացի բարի նպատակների համար փող հաւաքելուց, կարելի լինի և թատրոնը օգտաւէտ և սիրելի դարձնել ժողովրդի համար:

Ֆ.

հուղի (հրէայ) մը կը գտնայ, կը հարցնի թէ ոտքի վրա առուտուր կուգեմ անել, ինչ բան աւելի վաստակով կը ծախվի: Եւ հարցնելու կը տեսնայ որ էտա մարդ խամ ի, դատ չի հասկնար, կամ թէ աղուհուտ պոչից գատ վաստակով բան չի ծախուեր. ինչքանապէս *) փարայ ունիս, դու տուր աղուհուտ պոչուն, վերջը ձիկ (ինձ) պիտի օրհնես: «Աղէկ, ամա ի՞նչ օրհնելու կը քանդար պոչ որ ծախված, կը հարցուցէ խաւրով: «Ես վաղը պիտի երթնամ Ֆրանսիայում: Կամ ես հուղիս կուգեմ ևս էստեղծելու զից է օրհնելու քանի մը հազար հատ... մէկ հազարի չափ էլ տունս կայ, կուգեմ իրիկունս արի տամ: Խաւրով էն իրիկունս, առանց մէկի մը բան ասած, կերթայ էնա 1,000 պոչն էլ կառնի...»

—Հա, հա, հա, հա... խնդրեմք ամենքս, հաջի աղայի խոսելու ձեռք նկատելով թէ վերջը մի լաւ կատակերգութիւն կայ:

—Միւս օր կանուխ—չարուհական ծերունին— խաւրով իր պոչերը կը տանի բաղար, կը նստի մէկ տեղ, որ ծախի Ա՛ մարդ, դու ծոռ. (խենթ) ես, կասն իրեն ամենքը. աղուհուտ պոչը ծախելու բան է, որ բերած ես էսա տեղ: Բայց խաւրով մարդու չի հաւատար: Չում (մինչև) կէսօր կը նստի, կը տեսնայ որ մէկ հատ էլ չը ծախուելն դատ, ամեն անգամ լրան կը խնդայ: Աս մէկն է մէկ կը լեցուի, արեւն-արտուշը կուլայ: ձիւղ էք ժամանակ սուլվան Մաշիկ կանցնի, պատճառը կիմանայ և յոս կը տայ էք մարդուն թէ վա-

ղը քառապատիկ գնով բոլոր պոչերն էլ կը ծախուին...

—Հա, հա, հա, հա, խնդրեմք ամենքս, հաջի աղայի, կարծելով թէ սուլվան Մաշիկ կատակ է միայն արել:

—Իրիկունս կողմ—չարուհական հաջի աղան— ես հուղիս երեւ խաւրովալին հրաման կընդունի սուլվան, որ եթէ միւս օր բոլոր հրէաները մէկ մէկ աղուհուտ սուլ չը կախն իրենց ձախտան, սուլով կը մտնին... Մէկէլ որ—վրա բերեմ, հաջի աղան աւելի ողորկված—տեսնալ որ իրաջնէ բոլոր ես հուղիքը աղուհուտ պոչն են կախն...

Ասաց ու քաջբա՛ խնդաց ցամբած ծերունին, տեսնելով մեր ամենիս լուռն ողորկութիւնը:

—Եւ պոչերը խաւրովն գնեցին, հարցնի ես հետաքրքրի:

—Հրամանք, հապ—պատասխանեց նա դեռ իր խնդրը շարունակելով—խաւրով էք մէկ աւուր մէջ 800 մէջիդ *) վաստակ արեց:

Վերջին խոսակցութեան միջոցին սենեակի մի անկիւնում պատկերասրահով էր արդէն ընթերցի «սեղան»-ը: Տղաներից մէկը դրեց հաջի աղայից մի կանգուն հեռու մի տարուհետ: Երկու ուրիշ պատանիներ զետեղեցին նրա վրա բոլորակաձև պատրաստ սեղանը: Գա պոչն մէկ մինի **) էր երկու կանգուն տրամագծով: Նրա մի պրոկը հասնում էր հաջի աղային, որով նա պէտք չու-

*) «Մէջիդ»-ը հաւասար է մեր երկու բուրձուն: Նրա մի քանի բոլորակաձև կտրվում է «ղբուշ», որ կը լինի մեր 10 կողեկը:

**) Խմորութեան համար վատագույնների հարաբերակ միջին դասակարգից այդ սինին չինել են տալիս տակսայից:

նէր իր տեղէն շարժվելու՝ հաց ուտելու համար: «Վեղանի» ափերին շարված էին տանու ծալված հացեր (լուր), կտրված բոլի ու սոխ և խորձ խորձ խառն զանազանք, իսկ նրա ձիւղ մէջ տեղ—մի պնակով պանիր: Պատերի տակից մինչ դարները քաշվելով, դրվեցան սեղանի շուրջ: —Եստէք, հրամայեց հաջի աղան և ամեն մարդ, առանց իր նստած կարող փոխելու, մօտեցաւ սեղանին և բաղմոնեց միմեարի վրա ծալապատիկ:

Սեղանը կանգնէր մօտ 15 մարդ, իսկ երկու պատանիներ էլ պաշտօն ունէին ծաշողներին ըստ պատասխանութեան անելու: Երեւանի մի մասը, որ չէր կարող տեղաւորվել այնտեղ, գնում էին «տան-տուն» մայրերի հետ ընթերցու:

«Տան-տուն» է կոչվում վանեցոց ընդարձակ խոհանոցը, ուր դառնում է երկու թոնիր: Գրանցից մէկը աւելի մեծ է և ծառայում է հաց թխելու. միւսի մէջ, որ երկու կամ երեք անգամ աւելի փոքր է, նրանք եփում են իրանց կերակուրները: Գա կոչվում նոյնպէս օջախ: Տան-տունը համարվում է նոյնպէս կանանց սեղանատուն, իսկ ձմրան ժամանակ դա լինում է շատ ընտանիքների համար այն միակ ջերմոցը, ուր մեծը թէ փոքրը կարող են փոքր ինչ տաքանալ, ոտները թոնիր մէջ կոխելով: Բայց դիւրեւում նա ծառայում է նոյնպէս իբրեւ առանձնատանի: Նշանաւոր ևս ևս է այդ՝ մինչև իսկ քանի մի զոյգ ամուսնացեալների համար:

Հաջի աղան մի հայեացք ձգեց ամենքի վրա, իր մօրուքը ***) շփելով և երբ տեսաւ որ խորին

***) Վատագույնագույն մօրուք պահելը բացառիկ իրաւունք է միմիայն հոգեւորականների ու

լուրթիւնը տիրապետում է, մի քանաւալայել երկրաճութեամբ ու բարձր ձայնով սկսեց.

—Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս, ամէն: Հայր մեր որ յերկինս... (մինչև վերջ): Հաշակեացու խաղաղութեամբ, դու պատրաստաւն է ի Տեսաւնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ, օրհնեալ է Տէր ի պարգև իւր, ամէն:

—Հրամմէ, —դարձաւ նա դէպի ինձ՝ ուտելու հրաւիրելով և ամեն մարդ սկսեց իր գործը տեսնել:

Հին մարդոց փափագն է, որ ուտելու ատեն երկար դրոցներ չը լինեն: Ուստի դանք առնելը մանր մանր նկատողութիւնները: Չանց առնելը նոյնպէս կերակուրների նկարագրութիւնը:

Հացը վերջացաւ. դարձեալ ծերունու աղօթքով:

—Գոհութիւն և փառս տացուք կերակրողին տիեզերաց, անուամբ Հօր և Որդոյ և Հոգւոյ Սրբոյ, ամէն: Հայր մեր, որ յերկինս... Լուրթիւն ի վերայ սեղանոյս անհատ և անպակաս արատեցեա, Քրիստոս Աստուած մեր, որ դմեզ կերակրեցեր և լիացուցեր, քեզ փառք յաւիտեանս, ամէն:

Առանց այս սրտառու աղօթքների վասպուրակների ժողովուրդը չէ կարող ոչ հացի նստել և ոչ հացից վերկենալ: Շատ ընտանիքներում աղօթիկու պաշտօնը, մասամբ կամ ամբողջովին, յանձնվում է նաև երեխաներին, սակայն մեր Ստեփան աղան երբեմն միայն զիջանում է Հայր մեր-ը կամ «Լուրթիւն»-ը ասել տալ տղաներին:

(Կը շարունակվի)

աւուր աշխարհականների: Եթէ մի այլ դը (տեղացիներին) փորձէ իրան սեփականել այդ արտօնութիւնը, —կը դառնայ հասարակութեան ծաղրի և նախատիքի առարկայ:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Հիւսիսային գործակալութիւնը» հաղորդում է հետեւեալը: «Բերլինի տեսակցութեան առիթով «Journal de St. Pétersbourg» լրագիրը ասում է. «Բերլինից ստացած հեռագիրները լի են թագաւոր Վայսարի և Օգոստոսի առաջնի զարու մանրամասնութիւններով, նմանապէս այն ընդունելութեան մասին, որ արեւին Նոյսա Մեծութիւններին Նոյսա արժանապարզ պատգամ և նրա տան անդամները: Վերջին կայսրը, սրտաբաշտ հողագործութեամբ, չէ նայելով իր օգոստոսի առաջնի առողջութեան մասին ունեցած ցաւալի հոգեւորին, անձամբ վերահսկում էր այդ ընդունելութեան պատրաստութիւնները վրա, որով և կրկին անգամ ապացուցեց իր սէրը թէ դէպք միապետական աւանդութիւնները, և թէ դէպք ընտանեկան կապերը, որոնք կապում են նրան Ռուսաց թագաւորու ճան հետ Բայց նոյն իսկ յիշեալ տիտղոսի հոգեւոր, որոնց ամբողջ սրտից բաժանում էին մեր սիրեցեալ թագաւոր Վայսարի և թագուհի Վայսարուհին, թիւարկեցին Նոյսա Մեծութիւններին թիւսնացնել որքան հնար էր, յարգված միապետին այն աշխատանքները, որոնք կապված են այդպիսի դէպքերում սահմանված հանդիսակատարութեան հետ և յատկացնել այդ տեսակցութեանը նեղ ընտանեկան շրջանի բնաւորութիւն, որտեղ այնքան աւելի ևս սրտակցութիւն էր արտայայտվում, որ այն հանգամանքները, որոնց ժամանակ տեղի ունեցաւ տեսակցութիւնը, զորում էին դէպք փոխադարձ համակրութիւնը: Այդ փոխադարձ զգացմունքների ապացուցանքները, ունեին անտարակոյս երկու Միապետների համար թանգաղին նշանակութիւն: Մենք համարվում ենք, որ Ռուսաց հասարակութիւնը նրանց կը վերաբերվի մեծ համակրութեամբ և յայտ ունենալ, որ դերմանական ազդեցություն կը միանայ միապետի սրտի զգացմունքներին, որին նա նոյնչափ յարգում է, որչափ ևս սիրում է Մեղ միտում է ցանկանալ, որ այդ լուս տպագրութիւնները մի հաւատարիմ արձագանք գտնեն և երկու մեծ կայսրութիւնների փոխադարձ յարաբերութիւնների մէջ»

«Новое Время» լրագիրը հաղորդում է, որ լուցկիների վրա հարկը տալու է դանձարանին 4 միլիոն ռուբլի եկամուտ: Ընդհանրապէս է առնել 1/4 կլ լուցկիների արկղից, որ իր մէջ 75 հատ լուցկի է պարունակում և 1 կոպէկ 300 հատ լուցկի պարունակող արկղից: Այդպէս լուսաւորող նաւթային արդիւններից ենթադրված է առնել կէ-րօսինից և յատկութեամբ նրան համապատասխանող արդիւններից, 40 կոպէկ պուրից:

Շնորհակալութեամբ ստացանք Բելգիայի Բրիւսէլ քաղաքում հրատարակվող «Revue de droit international» (Միջազգային իրաւունքի հանդէս) վերնագրով ամսագրի այս տարվայ № 3 տետրակը, որի մէջ գետնադրված է Թիւրքաց հայերի մասին մի շատ հետաքրքիր և ընդարձակ յօդուած: Զօրութիւն հեղինակը հանդէսի չորս գլխաւոր խմբադիրներից մէկն է, Բոլէ-ժէկմէնս (G. Rolin-Jaequemyns), որ նախագահ է միջազգային իրաւունքի Ինստիտուտի և մի ժամանակ միջնորդ է եղել Թիւրքաց հայերի մասին նրա տպված յօդուածը կրում է հետեւի վերնագիրը: «L'Arménie, les Arméniens et les traités» (Հայաստանը, հայերը և դաշնագրութիւնները): Այդ վերնագրից արդէն ընթերցողը կարող է եղբակցանել որ հեղինակը խոսում է միջազգային իրաւունքի տեսակետից հայոց խնդրի մասին: Բոլէ-ժէկմէնս հաւաքել է իր ընդարձակ յօդուածում այն բոլոր նիւթերը, փաստերը և տեղեկութիւնները հայոց խնդրի վերաբերմամբ, որոնք կարող էին գտնվել այդ խնդրի մասին հրատարակված գրութիւններում և պաշտօնական զօրութիւններում, բոլորը միասին ամփոփելով և այդպիսով որքան հնար էր, լուսաբանելով հարցը: Մի խօսքով՝ ինչ որ կար եւրոպական դատարաններում և պաշտօնական թիւրքերում թիւրքաց հայերի խնդրի մասին, բոլորը յիշված է վերոյիշեալ ամսագրական յօդուածում: Առհասարակ հեղինակը նայում է հայոց խնդրի վրա, որպէս մի խնդրի վրա, որը վաղ թէ ուշ հաստատանալով անպատճառ կը դրաւի եւրօպական դիպլոմատիայի ուղարկութիւնը: Հայոց խնդիրը, բնութագրի ռուսմանական հեղինակի կարծիքով, արդէն մտել է միջազգային քաղաքական իրաւունքի խնդիրների կարգը, և նրան վերցնել

դիպլոմատիական սեղանի վրայից այլ ևս անհնարին է: Զօրութիւն մի քանի գլխերի է բաժանվում: (Առաջաբան, Հայաստանը 1856 թիւ փա-րիզի դաշնագրութեան ժամանակ, Հայաստանի իրաւաբանական դրութիւնը Սան-Ստեֆանոյի և Բերլինի դաշնագրութիւնների ժամանակ և անդր-թիւրքական պայմանագրութեան ժամանակ 1878 թիւն): Հեղինակը խոստանում է իր գրութեանը շարունակութիւնը, որտեղ նա կը պատասխանի արդեօք Հայերին տուած բոլոր խոստումները իրագործվեցան թէ ոչ:

ԳԱՆՁԱՎԻՅՑ մեզ գրում են նոյեմբերի 5-ից, որ անա մօտ մի ամիս է որ Գանձակում գտնվում են Սաֆարաբեան իր կնոջ, տիկին Ալմայի հետ, պ. պ. Գալֆաբեան և Աբրահամեան, տիկին Փարսանձեմ և օրիորդ Անահիտ: Այդ դերասանական խումբը ներկայացրեց Գանձակում հետեւեալ պիեսները. «Երթա-Բալա», «Թուրք-խաղաղացի կենտրոն», «Բարաբաբեան մահ», «Սանդուխտ», և մի քանի փոքրիկներ: Թիւրքական շատ գովում է ներկայա-ցունները և հաղորդում է որ խումբը դիտաւո-րութիւն ունի թատերասէրների հետ միասին դարձեալ մի ներկայացում տալ բարեգործական նպատակով:

ԱՍՏՐԱԽԱՆԻՑ մեզ գրում են: «Տեղիս հայոց օրիորդաց դպրոցը բաւական լաւ և կանոնաւոր դրութեան մէջ է գտնվում: Նա ունի երեք պատ-րաստականներ և երկու դասատուներ: Գալոցի աշա-կերտութիւններ թիւը այժմ 80-ի է հասնում: Տղա-յոց դպրոցը 40 աշակերտներ ունի, չը նայելով որ անցեալ տարի է միայն լացվել Նա ունի երկու պատրաստականներ: Աղաքաբեան դպրոցը արդէն քաղաքային դպրոց է դարձել. այդտեղ հայերէն լեզուն թէ ևս աւանդում է, բայց բոլոր մնացած աւարկաները ռուսերէն լեզուով են աւանդվում»:

Մեզ գրում են ԱՍՏՐԱԽԱՆԻՑ հետեւեալը: «Այս-տեղի թաթարները բոլորովին նման չեն իրանց ընտելութեամբ և բարք ու վարքով: Անդրկովկա-սի մասնաւորականներին: Այստեղի թաթարները այլ ևս վարչերի չեն, բայց ընդհանրապէս՝ ընտա-նեկան կենտրոն, կարգ ու կանոններ, աշխատան-քին ու համեստ կենտրոն ընտելացած: Նրանք ոչ դպրութիւն, ոչ էլ սպանութիւններ են անում: Բոլոր հասարակ ժողովրդի խաղաղ բարք ու վարք մանուշակ բարեբան ներգործութիւն են ունե-ցել վարչերի «Զօրութեան Որդայի» նախկին գա-ւակների վրա»:

Մեր լրագրի անցեալ համարներից մէկում տըպ-ված էր մի նկատողութիւն այն մասին, թէ ինչ եղան հայոց ընդհանուր Ուսուցչական ժողովի կարգադրիչ յանձնաժողովի մօտ մնացած փողե-րը, և թէ երբ պէտք է այդ անսխալ մի հա-շիւ ներկայացնել հատարակութեանը: Այժմ մեզ հաղորդել են մի քանի ճիշտ տեղեկութիւններ այդ մասին, որը և շտապում ենք հրատարակել: Ուսուցչական ժողովը մուտք ունեցել է ընդամենը 4568 ռուբլի 34 կոպէկ, իսկ ծախք եղել է ընդա-մենը 2971 ռուբլի 66 կոպէկ: Կարգադրիչ յանձ-նաժողովը իր հաշիւները փակել է 1882 թիւ դեկտեմբերին, և ներկայ 1887 թիւ յուլիսի 4-ին ժողով գումարներով թիւքիւսում, պարզել է մնա-ցած փողերի հաշիւը, որից երևում է որ Ուսուց-չական ժողովի փողերից այժմ մնում է 1894 թ. 49 կոպէկ: Այդ գումարը չահեցվում է մի բանի մէջ: Վերջապէս, ի դէպ է նկատել և այն, որ կարգադրիչ յանձնաժողովի ցանկութեան համե-մատ, յանձնաժողովի անդամ պ. Աբրահամ Զօ-րութիւն տեղեկագիրը, որը գուցէ մօտերումս լոյս կը տեսնի, և անկասկած կարող կը լինի բաւականութիւն տալ հատարակութեան արդարա-ցի հետաքրքրութեանը, հաղորդելով ճիշտ տեղե-կութիւններ ընդհանուր Ուսուցչական ժողովի պարագայունքների և տեսական հաշիւների մա-սին: Մեզ մնում է ցանկանալ, որ այդ տեղեկա-գիրը որքան կարելի է շուտ լոյս տեսնի:

Երկուշաբթի, նոյեմբերի 9-ին, թիւքիւսի թա-րօնում առաջին անգամ ներկայացվեցաւ Ն. Սո-լովիովի «Կորդելիա» (Корделия) օպերան: Օպե-րայի բովանդակութիւնը առնված է միջնադա-րեան իտալական կենտրոն, երբ Վելֆերի և Գի-բելլինիների քաղաքական երկպառակութիւնները ամեն բոլոր վրդովում էին աղգարանակութեան

խաղաղ կենտրոն: Երաժշտութեան մասին, ինչ որ մի քանի ժամանակ առաջ «Մշակում» ասված էր ջալկովսկու մասին, նոյնը կարելի է կրկնել և այժմ, միայն այն զանազանութեամբ, որ ջալ-կովսկին գեղեցիկ կերպով հնչեցնում է օրկեստրը, մինչդեռ Սօլովիովի օրկեստրը ամբողջ ժամանակ լուր լսողի ջղերի վրա: Օպերան փոքր ի շատէ ա-ջողվում է միայն երրորդ և չորրորդ գործողութեան մի քանի կտորներով, և դերերը գեղեցիկ կերպով զլխաւոր դերակատարների կողմից կատարելու պատճառով: Բացի թիւքիւսից, օպերան աջողու-թիւն է ունեցել միայն Պետերբուրգում, այն էլ միայն առաջին տարիք, երբ բեմի վրա երգում էին տ. Պավլովսկայա և պ. Պրեանիշնիկով, այ-նուհետեւ պ. Պրեանիշնիկովի Պետերբուրգից հե-ռանալուց յետոյ, տ. Պավլովսկայի ուժերից բարձր էր մենակ պահպանել օպերան և այժմ, ինչ-պէս պատմում են, օպերան Պետերբուրգում աջողութեան չունի, ինչպէս և Ռուսաստանի ուրիշ բեմերի վրա, որտեղ նրան ներկա-ցանում են: Որքան պ. Պրեանիշնիկով պահպա-նում էր Պետերբուրգում օպերան, նոյնը անում է և այստեղ, արժանի ընկեր ունենալով տ. Իո-զեֆովիչին: Օպերայի սարքը ու կարգը, ինչպէս և ներկայ սեղանում տրվող բոլոր նոր օպերաների սարքը ու կարգը, դեղեցիկ է: Շատ էֆեկտաւոր է առաջին գործողութեան մէջ հրդեհը:

Անդրկովկասի զանազան կողմերից մեզ հասած տեղեկութիւններից երևում է, որ առաջին զին-ւորակոչութիւնը արդէն մեծ մասամբ աւարտվել է, և մինչև այս ամիս 20-ը գուցէ բոլորովին կը վերջանայ: Շատ տեղեկութիւն արդէն սկսել են բժշ-կական դիւնութեան ենթարկել նրանց, որոնք վի-ճակ են հանել, որպէս զի դրանից յետոյ պիտա-նի համարվածներին զինուորական ծառայութեան մէջ մտցնեն:

Ստացանք թիւքիւսի կենտրոնական գրաւաճա-ւանոցի հրատարակութեամբ լոյս տեսած «Օրա-ցոյց» 1888 թվականի, 128 երեսից բաղկացած: Օրացոյցի մէջ, որի գիրք թանգ չէ նշանակած, այն է 15 կոպէկ, գետնադրված է հայոց եկեղեցա-կան-ծխական դպրոցների ամբողջ ծրագիրը, որը մի տարի առաջ լոյս է տեսել Նշմարմանում, այն-պէս որ այդ օրացոյցը պիտանի կարող է լինել նոյնպէս և այլ վարժապետներին և վարժուհիներին: Օրացոյցին կցած է բացի կենտրոնական գրաւաճառանոցում վաճառվող հայերէն գրքերի ցուցակից՝ և մի և երազահան, որը առ նրաւից աւելորդ կարելի է համարել: Ի դէպ, մի նկա-տողութիւն, մինչև տարվայ վերջը անկասկած լոյս կը տեսնեն էլի մի քանի Օրացոյցներ, բայց դարմանալի է, որ այդպէս օրացոյցեր կաղմոգ-ները և ոչ մէկ յանձն չէ առնում մի օրացոյց կազմել աշխարհաւ ընդհանուր, և եկեղեցական սուրբերի ու երգերի վերաբերեալ մանրամասնու-թիւնների փոխարէն աւելի պիտանի և հետաքր-քիր տեղեկութիւններ հաղորդելով ամսաթիւերի դիմացը: Նշմարման ստացանք և Բոստօլից պ. Յ. Տէր-Աբրահամեանի հրատարակած Օրացոյցը 1888 թիւ. գինը 15 կոպէկ է նշանակած: Օրա-ցոյցի մէջ բացի սովորական տեղեկութիւններից կան տեղեկութիւններ Ռուսաստանի, Տաճկաստա-նի և Պարսկաստանի եկեղեցական տեսչութեան մասին:

ԻԳՐԻՐԻՑ մեզ գրում են. «Կենտրոն ասպարե-ղում հայ ուսուցչի վիճակից դուրս աւելի դառն վիճակ չը կայ: Ապրուստի տեսակետից նայելով սա մի տեսակ անյոյս վիճ է, ուր բարոյական ու-ժիւն և հոգու մեծութեան տեղ ուսուցչիցը դրոշմ է լինել իրան. թէ պաշտօնավարութեան ժամանակ և թէ անպաշտօն, նրա դրութիւնը հաւասարա-պէս անտանելի է: Պաշտօն ունի, այս նշանա-կում է ամենազուճ ուճկով (ամուսնական 20—25 շատ շատ 30 ամիսէ) ստիպված է վարել մի որ և է դպրոցում շաբաթական 26—30 դասով ու-սուցչի-վերակացուի և նոյն իսկ ծառայի պաշտօն: Իսկ այս բոլոր զոհաբերութեանց փոխարէն նրա վարձն է աղա հողաբարձուի սպառնալից հրա-մանները, անտեղի պահանջներն ու նկատողու-թիւնները, և մանաւանդ, որ ամենածանր է ու-սուցչի համար, 4—5 ամիս մի անգամ ուճիկ ոտանալը, ինչպէս որ սովորաբար պատահում է խղիւրում: Մեր դպրոցների հողաբարձութիւնները սովոր են պահանջել վարժապետներից ամեն բան,

բայց իրանը իրանց փոքրիկ պարտաւորութիւնը անգամ չեն կատարում, և չեն աշխատում կանո-նաւորել դպրոցների տնտեսական դրժները: Մինչև երբ պէտք է այսպէս չարունակվի»:

Տեղական ռուս լրագիրները լսել են, որ թիւք-իւսի նոր թատրոնի շինութեան աւարտելը յետա-ձգվում է ան որ ոչ ժամանակով, որովհետեւ ֆինանսների միջնորդութիւնը մերժել է տալ այդ մասին հարկաւոր գումարը, որը նրանից սպաս-վում էր:

ԱՐՏԱԲԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԹԻՒԻՐԱՅ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

«Հիւսիսային գործակալութիւնը» հեռագրում է Պետերբուրգի լրագիրներին հետեւեալը. «Հայոց կրօնական ժողովում քննվում էր մեծ վիճիւրի մօտ պատգամաւորութիւն ուղարկելու հարցը: Այդ պատգամաւորութիւնը պէտք է յայտնի, որ հայոց հոգեւորականութիւնը իրան պատասխանա-տու չէ համարում այն հաւանական հետեւեալի մասին, որ կարող է ունենալ Պատրիարքի հրա-ժարականը, որը Պատրիարքը մերժում է յետ վերջինից: Գորահ հետ միասին պատգամաւորութիւ-նը պէտք է պնդի Պատրիարքի կողմից առաջար-կած պահանջների իրագործման վրա, պահանջ-ներ, որոնք հիմնված են սուլթանների բերաթիւն-րով հայերին տուած իրաւունքների վրա և հաս-տատված են Բերլինի դաշնագրով: Եթէ այդ առա-ջարկութիւնները ցանկացած աղբեղութիւնը չեն դործի, այն դէպքում, կարող է պատահել, որ պատգամաւորութիւնը անմիջապէս կը դիմի Սուլ-թանին նոյնպէս և հայոց կաթողիկոսին»:

Հայաստանի զանազան կողմերից հաղորդած տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ առաջա-կութիւնը և ասպատակութիւնը այդ երկրի մէջ ոչ թէ միայն չէ դադարում, այլ և դարձել է մի տեսակ տեղական շարժիչ, որին զոհ են դե-նում ոչ թէ միայն գիւղացիների սեփականութիւ-նը և հողն, ոչ թէ միայն քաղաքացիների խա-նութիւնը և ապրանքը, այլ և բազմաթիւ մար-դիկ, որոնց քիւրդ հրոսակները անողորմ կերպով մորթում և սպանում են: Վերջին ամիսներում Բա-սէնի մէջ մարդասպանութիւնները սովորական են դարձել. այլ ևս անհնարին է ճանապարհորդել այդ գաւառի մէջ. մարդասպանութիւնները շա-տացել են և Ալաշկերտի կողմերում. բայց ամենից սոսկալին այն սպանութիւններն են, ո-րոնք անցեալ հոկտեմբերին տեղի ունեցան Կար-սից Ալաշկերտ տանող ճանապարհի վրա: 13 հո-դե Կարսից Ալաշկերտ վերադառնալիս հանդի-պում են քիւրդ աւաղակներին: Աւաղակները խը-լում են դոյցա բոլորի ունեցածը, բայց վախենա-լով որ դուրս իրանց կը ճանաչեն և կը մատնեն իշխանութեանը, վճռում են բոլորին սպանել: 13 հային էլ սպանում են և բոլորին էլ թաղում մի փոսի մէջ: Անցնում են շատ օրեր, և միայն պա-տահմամբ, մի քանի գիւղացիք գալով այդ կողմե-րը փայտ կտրելու, տնտեսում են դեմոն տակից երեսացող մի ձեռք, և փորելով դուրս են բերում այնտեղից 13 մարդու դիակ: Շուտով տեղեկու-թիւն են հասցնում միւլթիսարքին, որը հրամա-յում է դիակները բերել, և քննութեան ենթար-կելուց յետոյ, թաղում են: Այդ սոսկալի չարա-գործութիւնը կատարող աւաղակներից մի քանի-սը արդէն բռնված են, և ժողովուրդը սպասում է որ նոյնա ըստ արժանապի պատմվեն:

Արտասահմանի հայոց լրագիրները հաղորդում են, որ հոկտեմբերի 5-ին Եւրոպայի բանտից ա-զատվեցան ութ հայ բանտարկեալներ, որոնք ամբողջ ութ ամիս տանջվեցան բանտի խուցե-րում:

Պօլսի «Արեւիք» լրագրում Յարութիւն Պատ-րիարքի հրաժարականի առիթով կարդում ենք հետեւեալը.

«Ըստ որոշման կրօնական ժողովի, Պատրիար-քական Գեր. Փոխանորդ Հայրն երկի, հոկտեմբերի 28-ին Բ. Գուռը գնաց և խնդրեց կրօնական գործոց Տեսուչ Զիւլմեր պեյն որ կրօնական ժողովը հաղոր-դուի Շահապաղեան վարդապետի ջատագովու-թեան համար Զիւլմերից Առաջնորդին կողմէ տեղոյն կուսակալին և անորի Կատական նախա-րարութեան ուղղեալ մէկ գիրն, որոյ պարունա-կութեան նկատմամբ, կը հաւատեն թէ Հայ աղլին դարաւոր հաւատարմութեան դէմ կատ-

